

Վ. Գրիգորյան

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆԵՐԻ  
«ԳԼԽԱՎՈՐ ՌԵԳԼԱՄԵՆՏԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս, Մատենադարանում կատարած մեր պրպտույթների ժամանակ հանդիպեցինք մի ձեռագրի, որը զգալի հետաքրքրություն է ներկայացնում 19-րդ դարի սկզբի հայ-ուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար: Այդ ձեռագիրը Ռուսական կայսրության պետական կոլեկիաների «Գլխավոր ռեգլամենտի» հայերեն թարգմանությունն է, որ կատարվել է 1803 թվականին Պետերբուրգում՝ Մելքիսեղ Ղամադյանի կողմից: Թարգմանությունը կատարված է «Ռեգլամենտի» վրացերեն թարգմանությունից և համեմատվել ուսերեն ընդգրկի հետ:

Թարգմանությունը, որ պահվում է Մատենադարանում 2887 համարի տակ, թարգմանչի կողմից վերնագրված է հետևյալ կերպ.

«Գրքուկ փոքրիկ կոչեցեալ հասարակ, կամ ընդհանուր ռեգլամենտ. այսինքն կարգադրութիւն: Որով ամենայն թագաւորական կալէկք. այսինքն խորհրդարանք, կամ ժողովք դատաւորաց, վարելոց են ընդ այսու հասարակ կարգադրութեամբ բաց ի յատուկ կարգադրութեանց՝ որ իւրաքանչիւր կայեկաց տրեցեալ է:

Շարադրեցեալ և հաստատեցեալ ի յաւիտենական երջանկութեան փառաց արժանի յԱմենողորմ թագաւորէ ամենայն Ռուսաց, և այլոց՝ և այլոց, և այլոց, և ինքնակալ կայսերէ ի Մեծէ Պետրոսէ Առաջնոյ»:

«Գլխավոր ռեգլամենտը» Պետրոս I-ինի ստեղծած պետական կոլեկիաների սահմանադիր (հիմնական) կանոնադրությունն է. այն հրատարակվել և ուժի մեջ է մտել 1720 թվականի փետրվարի 28-ին: «Գլխավոր ռեգլամենտը» սահմանում էր կոլեկիաների ղեկավարման ընդհանուր դրույթները, նրանց իրավունքներն ու պարտականությունները կոլեկիաների ներքին կառուցվածքը, նրանց փոխարարբերությունը սենատի ու իշխանության տեղական օրգանների միջև և այլն:

«Գլխավոր ռեգլամենտը» իր նշանակությունը պահպանել է մինչև ռուսական կայսրության «Հավաք օրինաց»-ի հրատարակվելը (1833), իսկ «Ռեգլամենտի» I-ին դրույթը՝ քաղաքական երդման տեքստը, որ պաշտոնյաները տալիս էին ցարին, անփոփոխ է մնացել և գոյություն ունի մինչև 1917 թվականի փետրվարյան ռևոլյուցիան»:

«Գլխավոր ռեգլամենտը» մինչև 19-րդ դարը հայերեն թարգմանված չի եղել, իսկ այս թարգմանությունից բացի այլ թարգմանություն, որքան էլ հայտնի է, չկա: Թարգմանությունը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ նա ռուսական պետական հիմնարկությունների ղեկավարման կանոնների հայերեն լեզվով առաջին թարգմանությունն է:

Արդ, ով էր թարգմանիչ Մելքիսեղ Ղամադյանը, ինչն էր նրան ստիպել ձեռնարկելու այս թարգմանությունը:

«Ռեգլամենտի» թարգմանչի անձնավորության մասին որոշ տեղեկություններ կան «Դիւան հայոց պատմութեան» 5-րդ հատորում: Այնտեղ ղեկողված Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի նամակներից մեկում ասվում է, որ Եփրեմը 1801 թվականին Ալեքսանդր I-ինի թագադրման հանդեսներին մասնակցելու համար դուրս է եկել Աստրախանից և մեկնել Մոսկվա, իր հետ տանելով երկու քահանաների՝ տեր Մինաս Ղորղանյանին և տեր Մելքիսեղ Ղամադյանին, որը «... յետ աւերմանն Թիֆլիզոյ. անկեալ էր աստ ի պանդխտութեան»:

«Դիւանի» հրատարակիչ Գյուլտ Աղանյանցը՝ հիմք ունենալով Եփրեմի այս նամակը և մի քանի ուրիշ նամակներ, նույն հատորի վերջում տալիս է ծանոթագրություն Ղա-

<sup>1</sup> БСЭ, старое издание, т. 15, стр. 169.  
<sup>2</sup> Դիւան հայոց պատմութեան, հատոր 5., 1902, Թիֆլիզ, էջ 389:

մաղյանի մասին: Նա գրում է, որ Մելիքիսեղ Ղամազյանը թիֆլիզցի քահանա էր. 1795 թվականին թիֆլիզի ավերման ժամանակ փախել էր Մոսկվա և այնտեղ քահանայությունը զբաղվելով մոտ հարյուրութույնների մեջ էր գտնվում Ղամազյանների հետ ու Դավիթ-Դանիելյան վեճի ժամանակ մեծ դործ է կատարել հոգուտ Դանիելի<sup>1</sup>:

Մատենադարանի ձեռագրական ֆոնդում, ինչպես նաև կաթողիկոսական ղիվանում և Ալեքսանդր Երիցյանի արխիվում մեզ հաջողվեց գտնել մի շարք նյութեր, որոնց հիման վրա հնարավոր է տալ «Ռեզյումենտի» թարգմանչի դործունեության համառոտ նկարագիրը և թարգմանության հանդամանքները:

Մելիքիսեղ Ղամազյանը թիֆլիզի հայոց կաթողիկե եկեղեցու ավագ քահանա տեր Առաքել Ղամազյանի որդին էր, ինքը նույնպես քահանա: Աղա Մահմեդ խանի արշավանքից հետո նրանց ընտանիքը ընկնում է աղքատության մեջ: Մելիքիսեղի հայրը շատ պարտքեր ունենալու պատճառով ստիպված էր իր որդիներին (Մելիքիսեղը ավագ որդին էր) ուղարկել Ռուսաստան, որպեսզի աշխատեն և վճարեն պարտքերը<sup>2</sup>: Մելիքիսեղը և իր եղբայրները թիֆլիզից դուրս են գալիս 1797 թվականին (և ոչ 1795 թվականին, ինչպես գրում է Դյուլո Աղանյանցը<sup>3</sup>) և մեկնում Աստրախան<sup>4</sup>: Մելիքիսեղը վաղուց ծանոթություն ուներ Նովոսիպ Արդուբյանի հետ և մեկնելով Ռուսաստան, ակնկալում էր նրա օգնությունը<sup>5</sup>: Աստրախանում Մելիքիսեղը հյուրընկալվում է Թադեոս վարդապետի կողմից և զբաղվում քահանայությունով<sup>6</sup>: Այդ պաշտոնի բերումով նա մի քանի անգամ Աստրախանից մեկնում է Ղլար<sup>7</sup>:

Մելիքիսեղը իր ժամանակի կրթված և դարգացած մարդկանցից է եղել, նրա մասին Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդ Նովոսիպ Արդուբյանի և պիսկոպոսը գրել է՝ «բազմաշխատ և ունձնագիր»<sup>8</sup>: «զիտնառատ քահանա»<sup>9</sup>, իսկ Դանիել կաթողիկոսը՝ «խոհեմաշատ քահանա»<sup>10</sup>: Մելիքիսեղը իր մաշկի վրա զգացել էր պարսկական տիրապետության սարսափները: Նա դիտեր, որ անդրկովկասյան ժողովուրդները պարսկական լուսնակալությունից ազատագրվելու իրենց հույսերը գրել էին ուսական պետության օգնության վրա և ինքն էլ ջերմ կողմնակից էր այդ բանին:

Մելիքիսեղի զբնի է պատկանում մի բանաստեղծություն, որը տպագրված է Մ. Մսերյանցի «Ընթացիկ» պարբերականի 1861 թվականի համարում<sup>11</sup>: Բանաստեղծության վերնագիրն է. «Ենթ դրական ի վերայ Տփլիսի քաղաքի»: Այս բանաստեղծության մեջ Մելիքիսեղը որդում է իր սիրեցյալ թիֆլիզ քաղաքի ավերումը 1795 թվականին Աղա Մահմեդ խանի հրոսակների կողմից: Նա որդում է իր համաքաղաքացիների անչափ տառապանքներն ու զոհերը, եկեղեցիների քանդվելն ու դանդակների լուծելը: Բայց նա չի հուսահատվում և ղիվանով իր քաղաքին հուսադրում է նրան, որովհետև ուսական կայսրը հրաման է տվել իր զորքերին՝ զալ օգնելու վրաց ազգին<sup>12</sup>:

<sup>1</sup> Դիւան, հատ. Ե, էջ 655:

<sup>2</sup> Այդ մասին գրել է Մելիքիսեղը 1817 թ. նոյեմբերի 23-ին Ներսես արքեպիսկոպոսին գրած ղեկուցագրում (տես, Մատենադարան, կաթողիկոսական ղիվան, թղթապանակ 21, վավերագիր 93):

<sup>3</sup> Դիւան, հատ. Ե, էջ 655:

<sup>4</sup> Տես Եվրեմի նամակը 1806 թվականի հունիսի 23-ին Ն. Նախիջևանից (Կթղ. Գ., թղթ. 8, վավերագիր 66):

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տես Թադեոս վարդապետի նամակը Ն. Արդուբյանին 1798 թ. 21 սեպտ. (Մատենադարան, կաթ. ղիվան, թղթ. 8, վավերագիր 66):

<sup>7</sup> Նույն տեղում, թղթ. 9, վավերագիր 15:

<sup>8</sup> Դիւան, հատ. Ե, էջ 449:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>10</sup> «Ընթացիկ», 1861, էջ 108—109:

<sup>11</sup> Պրոֆ. Լ. Մելիքիսեղ-Բեկիր իր «Անանուն հայ պատմիչի նորագյուտ ևրկը թիֆլիզի 1795 թ. ավերման մասին» հոդվածում գրում է, որ Մելիքիսեղ Ղամազյանը այս բանաստեղծությունը հորինել է 19-րդ դարի երկրորդ կեսին (տես, ՄԱՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» 1916 թ., № 3—4, էջ 46): Պրոֆ. Մելիքիսեղ-Բեկիր տված այս թվագրության հետ չի կարելի համաձայնվել: Բանաստեղծությունը գրվել է ոչ թե թիֆլիզի

Եփրեմ Եպիսկոպոսը զարմ Աստրախան, հանդիպում է Մելքիսեդին և նրան ընդունում իր մոտ աշխատելու որպես զբաղիչ:

1801 թվականի օգոստոսի 12-ին Մելքիսեդր Մինաս Ղորղանյանի և Եփրեմի հետ միասին մեկնում է Մոսկվա: Օգոստոսի 27-ին նրանք տեղ են հասնում և մասնակցում Ալեքսանդր 2-րդի թագադրման հանդեսներին: Լազարյանի 1801 թվականի սեպտեմբերի 25-ին Մոսկվայից գրած նամակում ասվում է, որ թագադրման հանդեսներից հետո Մելքիսեդր Եփրեմի, Լազարյան իշխանների և Մոսկվայի մի բանի հայ հարուստների հետ միասին հրավիրվում է ղեկավարել հարլ Ֆյոդորովիչ Կնոբինցի մոտ՝ Դավիթ—Դանիլյան վեճի կապակցությամբ<sup>2</sup>:

Այդ ժամանակ արդեն սկսվել էր պայքարը Դավիթի և Դանիլի միջև՝ էջմիածնի կաթողիկոսական թափուր մնացած աթոռի համար: Հայտնի է, որ այդ պայքարը կաթողիկոսական աթոռի համար մղվող սովորական պայքար չէր, որոնցով այնքան հարուստ է հայոց պատմությունը, ժամանակի ընթացքում այն վեր էր անցնում սովորական և պարսկական օրինադրությանը: Դավիթը ապօրինաբար զավթելով կաթողիկոսական զանր, հենվում էր Երևանի խանի օգնության վրա, մինչդեռ Դանիլը, իր հույսերը կապել էր սուլթանական կայսրության օգնության հետ և այդ պատճառով վայելում էր հայության ճնշող մեծամասնության սերն ու համակրանքը:

Մելքիսեդր ևս Դանիլի կողմնակիցներից էր: Այդ պայքարում Մելքիսեդր, հավանորեն, հանդիսանում էր ազդեցիկ ղեկավարից և այդ պատճառով նա էլ Կնոբինցի մոտ հրավիրվածների թվումն էր: Որոշ ժամանակ Մոսկվայում մնալուց հետո Եփրեմը Մելքիսեդին տանում է Պետերբուրգ: Պետերբուրգում Մելքիսեդր մանրամասնում է Մինաս Լազարյանի հետ, որն այն ժամանակ բավականին ակտիվ դեր էր խաղում հայ-ուսական հարաբերությունների մեջ:

Պետերբուրգում Մելքիսեդրի գործունեության մասին, բացի «Ռեզյումենտի» թարգմանությունից, այլ տեղեկություններ չկան: Ռուսական արտաքին գործերի կոլեկտիվ թարգման Ալեքսանդր Խուզարայանի 1821 թվականի օգոստոսի 13-ին Պետերբուրգից ներսես արքեպիսկոպոսին գրած նամակում ասվում է, որ Մելքիսեդր Պետերբուրգում եղած ժամանակ սուլթանական կառավարության կողմից պարզապես լքվել է խաչով<sup>3</sup>: Կարող ենք միայն ենթադրել, որ Մելքիսեդր ակտիվորեն մասնակցել է թագադրման կյանքին և այդ պատճառով էլ արժանի է դարձել պարզապես: 1804 թ. գրած նրա մի նամակից երևում է, որ նա Պետերբուրգում եղած ժամանակ լավատեղյակ է եղել Անդրկովկասի գործերին: Այդ նամակում նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի ղեկավարի մասին և վերջում ուրախությամբ նշում, որ սուլթանը Թիֆլիզից մեծ զորքերով արշավանքի են դուրս եկել Երևանի վրա: Պետերբուրգից Եփրեմը մեկնում է Ղրիմ իսկ Մելքիսեդր Աստրախանի վրայով՝ վերադառնում է Թիֆլիզ: Թիֆլիզում նա շարունակում է գործել Դանիլի օգտին: 1807 թվականին Մինաս Լազարյանին նա գրում է,

ավերումից 50—60 տարի հետո, այլ այդ ղեկավարի թարմ տպավորության տակ: Բանաստեղծության վերջում Մելքիսեդր հայտնում է, որ ինքը գտնվում է պանդխտության մեջ: Ինչպես վերևում տեսանք, Մելքիսեդր Թիֆլիզից Ռուսաստան էր գնացել 1797 թվականին: Ռուսաստանից նա Թիֆլիզ է վերադարձել 1807 թվականի հունվարի 10-ին (այդ մասին տես, Հովհաննես Եպիսկոպոսի նամակը Մինաս Լազարյանին 1807 թվականի հունվարի 18-ին Թիֆլիզից, կթղկ. զիվան, թղթ. 18, վավ. 7): Ուրեմն նա պանդխտության մեջ է եղել 1797 թվականից մինչև 1807 թվականը: Բանաստեղծության մեջ ասվում է, որ սուլթանը կայսրը օգնություն է հղել վրաց ազգին, որը շարաշար տուժել էր պարսիկների արշավանքից: Սուրբն այստեղ վերաբերում է Վրաստանը Ռուսաստանին միացնելու ակտին: Կարող ենք հաստատապես ասել, որ բանաստեղծությունը գրվել է 1797 թվականից մինչև 1801 թվականն ընկած ժամանակամիջոցում:

1 Դիւան, հատ. Ե, էջ 389:  
2 Նույն տեղում, էջ 122—125:  
3 Մատենադարան, կթղկ. զիվան, թղթ. 38, վավ. 150:  
4 Մատենադարան, կթղկ. զիվան, թղթ. 5, վավ. 73:  
5 Դիւան, հատ. Ե, էջ 500:  
6 Կթղկ. զիվան, թղթ. 18, վավ. 7:

որ ինքը պարտավորված 6000 սուրբի է խոստացել Պարսկաստանում գտնվող ոմի ձովհաննեսի և Ռոստոմի, որպեսզի նրանք կաշառելով այնպես անեն, որ Գանդիսի Պարսկաստանից ուղարկեն ոչ թե իջմիածին, ուր նրա կյանքին վտանգ էր սպառնում, այլ Քրիստոսի նա Մինասին խնդրում է ուղարկել այդ փոքր և միևնույն ժամանակ Գանդիսի մասին մի հանձնարարական գրություն գրաֆ Գուդոփիլին<sup>1</sup>։ Մի այլ նամակում (գրված ձովհաննես եպիսկոպոսի կողմից Մինաս Լազարյանին 1808 թվականի հունիսի 13) ասվում է. որ Մելիքից շատ ծառայություններ է մատուցել ռուսական կայսրությանը և այդ պատճառով գրաֆ Գուդոփիլը 1808 թվականի սպրիլի 20-ին Մելիքիցի մասին հանձնարարական է գրել իշխան Գոլիցինին և կայսրից նրա համար խնդրել ակնակուռ խաչ՝ «... վասն Տէր Մելիքիցին ևս պրևալ է, թէպէտ նա ստացել է խաչի Պետերբուրգ տանից պարգարանաց. բայց այժմ արժան է ակնակուռ խաչի»<sup>2</sup>։

Ինչպես երևում է վերը շարադրվածից, «Ռեզլամենտի» թարգմանիչը պատահական մարդ չէր, որ հետաքրքրասիրության կամ այլ բանի համար ձեռնարկել էր թարգմանությունը, այլ հայ-ռուսական հարաբերությունների մեջ որոշ դեր խաղացած, այն ժամանակվա բազարական կյանքում կշիռ ունեցող մի անձնավորություն, որի ցանկությունն էր՝ տեսնել իր հայրենիքը ազատագրված օտար լծից, մեծ Ռուսիայի օգնությամբ։

«Գլխավոր ռեզլամենտի» վերնագիրը թարգմանության մեջ գրված է ոչ թե տիտղոսաթևերի վրա, այլ բուն տեքստի սկզբում։ Ահա այդ վերնագիրը։

«Նորին կայսերական մեծութեան, հասարակ, կամ ընդհանրական Բեզլամենտ. այսինքն կարգադրութիւն, որ առ հասարակ թագաւորական կալէկաց և բոլոր բունչկարաց. նոցին՝ և քանթորից՝ գործակալաց՝ հարկ է, զի ի սմա պարաւանդեալ ընթանայցեն, որպէս ի յարտաքին և ի ներսնային կարգադրութիւնս՝ նմանապէս և ի կատարուս պարտաւորութեան իւրեանց»<sup>3</sup>։ Բնագրի վերնագիրն է.

«Генеральный регламент или устав, по которому государственные коллегии, також и все оных принадлежащих к ним канцелярий и контор служители, не токмо во внешних и внутренних учреждениях, но и во отправлении своего чина, подданныйше поступать имеют»<sup>4</sup>.

Թարգմանությունը կատարված է, ինչպես նշված է թարգմանության վերջում, «Ռեզլամենտի» ռ-րդ հրատարակությունից։ Ձեռագիրը բաղկացած է ընդամենը 48 էջից՝ 33×23 մեծություն, նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոսր, սողերը՝ 38—40, կազմը՝ կաշի, պահպանված է լավ։ Ձեռագրի 1բ—2ա թերթերում թարգմանչի առաջարանն է. բուն տեքստը «բ-րց մինչև 20ր—թերթն է, ցանկը և ոտար բառերի բառարանը՝ 21ա-ից մինչև 23ա թերթը։ 24-րդ թերթը մաքուր է։ «Ռեզլամենտի» բոլոր 58 գլուխներն էլ թարգմանված են։ Թարգմանիչը իր առաջարանը ուղղում է իր հայրենակիցներին՝ «ամենաերջանիկ սեպուհ հայրենեացի իմոց սիրատարփ համաշխարհիկ Հայկասերունդ գրահի, զերապատիւ հարց և եղբարց՝ Ամենաբերմանդ մտերմօրեն ղեկուցումն»։ Այս առաջարանում թարգմանիչը գրում է նաև «Ռեզլամենտի» հայերեն թարգմանելու գրգռվածությունների մասին՝ նա գրում է, որ ինքը իր հայրենի բազարի ավերածից հետո պանդուխտ է դարձել, բայց ինչպես մաղնիսը երկաթին, այնպես էլ իր հայրենիքի սերը բաշում է զիպի իրեն իր սիրտն ու հոգին և կամենալով իր սերը զրսևորել ոչ միայն խոսքերով, այլև գործով, նա երկար ժամանակ Ռուսաստանի «տիեզերապան» վայրերի ամենավարժամ բուրաստանում, փնտրում էր մի վայելուչ ծագիկ, որը արժանի լիներ մատուցելու իր հայրենակիցներին՝ ի նշան իր բաղամայա կարոտի, որպեսզի եթե ոչ մարմնապես, զոնե մտքով լիներ նրանց հետևել, լինելով Պետերբուրգ քաղաքում՝ ի ծառայություն և փրկել արքեպիսկոպոսի, նրա մեջ միտք է հղանում սույն «Ռեզլամենտը» թարգմանել հայերեն։ Մելիքիցից հրաշալի տիրապետել է վրացերենին և «Ռեզլամենտը» թարգմանել վրացերեն թարգմանությունից։ «Ռեզլամենտը» ուսերենից վրացերեն թարգմանել էր վասիլի Մաթուսիլ 2իլակր, որը աշխատել է սուսական կոլեգաներից

1 Կթղկ. գլխի, թղթ. 18, վավ. 70:  
 2 Նույն տեղում, թղթ. 19, վավ. 61:  
 3 Մատենագարան, ձեռագիր № 2887, թերթ 2ր:  
 4 В. И. Лебедев. Реформы Петра I, Сборник документов, М., 1937, стр. 108.

մեկուսում որպես թարգմանի: Մեկրիսեղի մեջ ղեպի այս ձեռնարկությունը մեծ սեր է արթնացրել Մինաս Լազարյանը:

«Ռեզլամենտի» թարգմանությունը, ըստ երևույթին, ոչ առանց Եփրեմ Կարեպետի գիտություն Մինաս Լազարյանը հանձնարարում է Մեկրիսեղին, և վերջինս սիրով ձեռնարկում է այդ թարգմանությունը: «Գլխավոր Ռեզլամենտի» հայերեն թարգմանությունը Մեկրիսեղը և Մինաս Լազարյանը անհրաժեշտ էին համարում այն սլաոնաոսով, որ հայերն էլ վրացիների նման, վայելելով ուսական կայսրության հովանավորությունը, պարտավոր են ծանոթ լինել ուսական օրենքներին: Առաջաբանում ասվում է.

«Ըստ որում ոչ միայն վերջը՝ այլև մերազնեայք ես պարտին ծանօթ գտանիլ այսմ կարգադրութեան սակս սոռ հասարակ ենթադրեալք զոլոյն արդիս՝ ընդ քաղցր հովանաւորութեամբ Աստուածախնամ տերութեանս Ռուսաց. և յատկապէս վիճակեցմամբ անպարտելի զաւագանի ինքնակալ կայսրութեանս, որ այսուհետև սոյն զաւագան պարտ է հովաւել և մխիթարել զմեզ»<sup>2</sup>:

Որոքը վերաբերում է ոչ միայն Վրաստանում բնակվող հայերին, որոնք Վրաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ վրացիների հետ միասին ընդունել էին ուսահպատակություն, այլև այդ նույն ժամանակ Վրաստանի հետ միասին Ռուսաստանին միացրած Փամբակի, Շիրակյալի, Շամշադինի սուլթանությունների, Լազարի վեբիլության հայությունը, ինչպես նաև հենց Ռուսաստանում բնակվող հայ բնակչությանը: «Ռեզլամենտին» ծանոթ պետք է լինեին նաև Արևելյան Հայաստանի մյուս շրջանների հայ բնակչությունը ևս, երբ նրանք աղատագրվեին պարսկական լծից: «Ռեզլամենտի» թարգմանությունը հետապնդում էր նաև պրակտիկ նպատակ: Այն ժամանակ ուսական ծառայության էին մտել բարձրագույն հայեր, որոնք շարունակ գործ էին ունենում կոլեգիաների հետ: Ռուսական կոլեգիաների հետ գործ էին ունենում նաև պետական ծառայություն չկատարող հայեր՝ ձեռնարկատերեր, առևտրականներ, կալվածատերեր, հողերականներ և այլք, որոնք խիստ կարիք ունեին տեղեկանալու կոլեգիաների իրավունքներին ու պարտականություններին, կոլեգիաներում գործավարության կարգին՝ իրենց պրակտիկայում օգտագործելու համար: «Ռեզլամենտի» կարիքն ունեին առանձնապես Պետերբուրգում և Մոսկվայում բնակվող հայ հարուստները և առաջին հերթին Լազարյանները: Ահա այս պատճառներն էին, որ անհրաժեշտ դարձրին հայերեն թարգմանելու Ռուսական կայսրության պետական կոլեգիաների «Գլխավոր Ռեզլամենտը»:

«Ռեզլամենտի» հայերեն թարգմանությունը բավական մոտ է բնագրին: Առաջաբանում Մեկրիսեղը գրում է, որ թարգմանությունից թարգմանելը, անշուշտ, նսեմացնում է հեղինակի մտքերի պարզությունը, ուստի և ինքը, զիտակեցելով այդ, զգուշությամբ իր թարգմանությունը համեմատության է դրել ոուսերեն տեքստի հետ:

Երբ համեմատում ես թարգմանությունը բնագրի հետ, թվում է, թե թարգմանությունը կատարված է ոչ թե այլ թարգմանությունից, այլ հենց բնագրից:

Մեկրիսեղը աշխատել է ամեն կերպ «Ռեզլամենտը» ավելի հասկանալի դարձնել հայերին, այդ պատճառով էլ երբեմն բնագրի մեկ բառը թարգմանելու համար օգտագործում է մի քանի բառ: Բնագրում թվարկված Ռուսական կոլեգիաները.

«... Иностранных дел, камор, юстици...»<sup>3</sup> թարգմանված են այսպես՝

«Յաղազս այլազգ տերութեանց՝ և կամ պանդխտոց իրակութեանց, յաղազս կամորի, այսինքն, սենեկի, կամ դանձուս կարգադրութեան, վասն թագաւորական շինուածոց: Յաղազս Երուստիցիու, այսինքն իրաւանց՝ կամ բարւոր զատողութեանց և այլն»<sup>4</sup>:

Շատ հաճախ օգտագործվում են ոուսերեն տերմիններ. գրանք զլիսավորապես կոլեգիաների ու նրանց կից դրասենյակների, մի շարք պաշտոնների անուններ և մեծ մասամբ պաշտոնական տերմիններ են: Չնայած որ տերմիններ կից տրված է նաև բառարան,

<sup>1</sup> Չեռագիր № 2887 թերթ, 1ր—2ա: Բացի Չիլանից «Ռեզլամենտը» վրացերեն է թարգմանել նաև վրաց Անտոն կաթողիկոսի աշակերտ Գայոսը, որը երկար տարիներ ապրել և գործել է Ռուսաստանում, եղել է վրացական զիվանդիտական միսիայի անդամ 1783 թ. Գիորգիևսկում՝ Ռուսաստանի և Վրաստանի միջև պայմանագրի կնքման ժամանակ (տես Դ. Կիկոժը, Իրակլիի Втором, Тбилиси, 1948, стр. 109—110):

<sup>2</sup> Նույն տեղում, թերթ 1ր:

<sup>3</sup> В. Н. Лебедев, Реформы Петра I, стр. 108.

<sup>4</sup> Չեռագիր № 2887, թերթ 2 ր:

բայց շատ ոուսերեն բառեր երբեմն մի քանի անգամ, տրվում են իրենց թարգմանու-  
թյան հետ միասին: Այսպես, հաճախ հանդիպում ենք հետևյալ արտահայտություններին՝  
«պրոտոկոլն», «այսինքն մատենան յիշատակարանաց», «սէքրեդարն», «այսինքն խորհրդական  
զբաղիրն», «աւագ զպիրն», «բշտրաֆն», «այսինքն տոյժ» (5-րդ զլխում), «փաքեթթըլ աշ-  
սինքն, ծրարք» (15-րդ զլխում) և այլն:

Նույն բանը նկատվում է նաև վերնադրերի թարգմանության մեջ: 24-րդ զլխի  
վերնադիրը «О комплиментях президентов» թարգմանված է «Յաղագս պրեզիդենտից  
Քոմփլիմենտի, այսինքն պատուաւոր ողջոյնատութեանց», 27-րդ զլխինը՝ «О рэзности  
всех провинций», «Յաղագս զանազանեյոյ զամենայն պրովինցիայս» այսինքն՝ «զաւաս  
կամ զճահանգս», 35-րդը՝ «О копнистах» «կօպէիստից, այսինքն» պատճենադրաց» և այլն:

Թարգմանիչը շարունակ պաշտոնական տերմինները ոուսերեն է օգտագործում ոչ  
այն պատճառով, որ զրանք չի կարողացել թարգմանել, ինչպես տեսանք զրանց թարգմա-  
նությունները տրվել են, այլ այն պատճառով, որ նա որոշակիորեն ձգտել է հայերեն  
վարժեցնելու այդ պաշտոնական տերմիններին: Հենց այս պատճառով էլ նա աշխատել է  
տալ ոչ միայն այդ տերմինների բացատրությունը, այլև նրանց ճիշտ արտասանությունը՝  
հայերեն տառերով տալով այդ բառերը երկու և նույնիսկ երեք ձևով: Բառարանի մեջ  
կարգում ենք. փօլիցիայ կամ պօլիցիայ, բշտրաֆ կամ շտրաֆ, բուպերնաթօր կամ  
գուպերնատօր, փունթթ կամ պունկտ, փակետ կամ պաքէդ և կամ փարէդ սեկրետար կամ  
սէքրեդար և այլն:

Բնագրի վերջում տրված է տերմինների և դրանց օտար բառերի բառարան, ուր հավաք-  
ված են 35 բառեր: Բառերի հաջորդականությունը տրված է ըստ զլուխների: Հայերեն  
թարգմանության մեջ բառարանում տերմինների հաջորդականության բնագրի սկզբուն-  
քը չի պահպանված, թարգմանիչը բառերի հաջորդականությունը որոշել է ոչ թե ըստ  
աւանձին զլուխների, այլ այբբենական կարգով: Պատճառն այն է, որ թարգմանության  
մեջ տրված են ոչ միայն եվրոպական բառեր, այլև ոուսերեն տերմինների բացատրու-  
թյուններ, ընդ որում, թարգմանության մեջ բառարանի տերմինների թիվը հասցված է  
58 ի, ըստի որ այդ տերմինները անընդհատ կրկնվում են առանձին զլուխներում, ուստի  
և նրանց գտնելը դուրսընկնում է միջոցը այբբենական կարգով դասավորելն էր, որը և  
արել է թարգմանիչը: Բնագրի բառարանի բոլոր տերմինները չեն, որ կան թարգմանու-  
թյան բառարանում: Թարգմանիչը եվրոպական մի շարք տերմիններ, որ տեքստում տրված  
են անթարգմանաբար, օգտագործում է հայերեն թարգմանության: Թարգմանության  
բառարանում եղած 58 բառից միայն ինն են բնագրի բառարանից, մնացածը թարգ-  
մանիչն է ավելացրել. այդ բառերից են. ստորած, փաթենթ, փակետ, փոշտ, վայլատա,  
պրիվիլեկ, փօլիցիայ, զօկումենտ, կանցելարիստ, կալկի, կանթօր, կամօր, բուպերնայ,  
արթարիսա և այլն: Եթե սրանց զուգարեսը նաև տեքստի մեջ և դրանց թարգմանիչը պաշ-  
տոնական տերմիններն իրենց թարգմանություններով, ապա կտեսնենք, որ Մելիքիսեկ  
Ղամազյանը, «Ինկվամենտի» թարգմանության հետ մեկտեղ կատարել է մի շնորհալի գործ  
ևս, նա տվել է մի փոքրիկ ուս-հայերեն պաշտոնական տերմինների բառարան, որը  
մինչ այդ չի ունեցել իր նախորդը հայ իրականության մեջ: Թարգմանության մեջ կան  
փոքր ինչ անհաջող սեպեր, բացթողումներ, աղավաղումներ, բայց ընդհանուր տոմար,  
այն հաջող է: Այս թարգմանությունը, անշուշտ, կատարվել է տպագրելու և հայերի  
մեջ տարածելու նպատակով, բայց ինչ-ինչ պատճառներով, որոնց մասին աղբյուրները  
լուրջ են, թարգմանությունը չի հրատարակվել և օգտագործվել է ձեռագիր վիճակում:

Մելիքիսեկ Ղամազյանի այս ուշադրավ թարգմանությունը մի լավագույն վկայու-  
թյուն է այն մեծ հետաքրքրության, որ ունեցել են հայերը ոուսական պետական հիմ-  
նարկությունների, ոուսական օրենքների նկատմամբ 19-րդ դարի սկզբներին, այն ժա-  
մանակ, երբ որ ոուսական պետությունն արդեն սկսել էր Արևելյան Հայաստանը Ռուսաս-  
տանին միացնելու գործը:

1 Զեռագիր № 2887, թիվը 22ա—23ա:  
2 Նույն տեղում: